№ 21 Փետրվարի 6 (18) 1881 Փետրվարի 6 (18) № 21

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուլ. կէս տարեկան 6 բուլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թերթիս մէջ գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ձեռագրագրվածները հրատարակ են ազգային

Redaction «Մշակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ձեռագրագրվածներն բնդունվում է ամեն ժամանակ.

Ձեռագրագրվածների համար վճարում են
խմբագրվելիք բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրք կառավարութեան վարմունքը.—Ներքին տեսութիւն. Նամակ Աւստրալիայից.—Ալբանիան տեսութիւն. Ռուսիա. Կոմս Լորիսէի Նամակը Ալբանիայի բարեր.—Մշակի հեռագրերը.—Հայաստանի թիւներ.—Բանաստեղծութիւն. Դաւիթ բէկ.

ԹԻՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՄՈՒՆՔԸ

—

Անգլիական «Daily News» լրագիրը գրում է հետեւեալը Հայաստանի մասին:

«Թէպէտ ճշմարիտ չէ այն լուրը թէ Թիւրքաց Հայաստանում ապատամբութիւն է սկսվել, բայց թիւրք կառավարութեան վարմունքը այդ երկրում կարծես դիտմամբ ամեն բան անում է, որպէս զի անպատճառ ստիպի հանել ժողովրդը: Այժմ կառավարութիւնը բաղմաթիւ չէրկեղներ է բերում և մոցնում է նրանց այդ նահանգի ժանդարմայի մէջ, աշխարհս կերպով յայտնելով որ իբր թէ այդ գաղանների պարտաւորութիւնն է լինելու երկրի մէջ կարգ ու կանոն պահել: Հայտնի է, որ մինչև ցարդ տիրում էր կարծիքների մի նշանաւոր տարբերութիւն Հայաստանում բնակվող Հայ, թիւրք և տաճիկ բնակիչների թիւ նկատմամբ: Այժմ երեւում է, որ թիւրք կառավարութիւնը որոշել է այդ խնդիրը իր համար մի շատ նպատաւոր և տարբեր կերպով լուծելու: Դա մոցնում է այդ նահանգի մէջ Անգրկովկասից, մանաւանդ Վասպի կողմերից գաղթող բաղմաթիւ մահմեդականներին, այնպէս որ մուսուլմանների թիւը պիտի էականապէս աճի:»

«Հայոց պատրիարքը, շարունակում է անգլիական լրագիրը, մարդիկ էր նշանակել, որ մեռաւորապէս խմնային Հայաստանի այլ և այլ ցեղերին պատկանող բնակիչների թիւը. սակայն թիւրքաց կառավարութիւնը կալանաւորել է այդ անձանց և իրան սեփականացրել է նրանց բոլոր թղթերն ու հաշիւները: Այդ տեսակ տեսակ միջոցներով Ռ. Պուռը ձգտում է ցոյց տալ, որ Հայաստան բառը պէտք է աշխարհագրական քարտէզներից քերվի և նրա տեղ Քուրդիստան բառը դրվի: Մինչև անգամ Կ. Պոլսում արգելվել են այն ամեն պատկերներ, որոնք ներկայացնում էին Հայոց նախնի քաջերին և թագաւորներին, և գրանց ծաղրերից էլ ոմանք բանտարկվեցան կառավարութեան հրամանով: Եթէ Հայաստանում ապատամբութիւն չէ ծագում, վերջացնում է անգլիական «Daily News» լրագիրը, դա բնա նրա համար չէ որ ապատամբվելու պատճառ չը կայ:»

Անգլիական նշանաւոր լրագրից թարգմանած այդ յօդուածին մենք մեր կողմից ոչինչ չունենք այդտեղ տեղացնելու, այն առանձնապէս հաճելաւոր է ինքն յօդուածը:

Այդ տեղեկութիւնների առիթով մենք յոյս ունենք մի այլ անգամ դարձեալ խօսելու, իսկ այժմ այս քանի կանենք միայն, որ թիւրքաց կառավարութիւնը Տաղկաստանի Սան-Ստեֆանոյի դաշնագրի և Բերլինի կոնգրէսի պայմանների, ոչ թէ միայն չէ աշխատում մոցնեցուցանել բոլոր ուրիշ Հայաստանում, բայց ընդհակառակն Հայաստան բառը մի տեսակ սարսափելի ուրուական համարելով իր քաղաքական ամբողջութեան համար, ամեն միջոցներ է գործ դնում, որպէս զի ջնջի Հայաստանի երեսից Հայերի անունը, մի և նոյն ժամանակ աշխատելով բնակեցնել Հայերի մէջ մահմեդական բաղմաթիւ տարր, նպատակ ունի ցոյց տալ Եւրոպային, որ Հայաստանում, որտեղ Հայեր չը կան, այլ միայն մահմեդականներն են բնակվում, Հարկ չը կայ մոցնել որ և է վերանորոգութիւններ և իրագործել ինքնավարութիւն յատկապէս Հայերի համար:

Թիւրքիայի այդ վարմունքի դէմ թիւրքաց Հայերը երկու միջոցներ ունեն միայն Որովհետև թիւրքիան իր գործունէութեան մէջ հիմնվում է բուն կրօնական սկզբունքի վրա, դէմ գնելով Հայաստանի քրիստոնեաներին մահմեդական տարրը, այդ պատճառով թիւրքաց Հայերը իրանց ձգտումների մէջ Հայաստանի ինքնավարութեան գործին հասնելու համար, պէտք է միանան իրանց երկրի բոլոր ճնցած քրիստոնեաների հետ, որ-

---

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ՓԹ.

Նոյն աւուր գիշերային պահուն ծերունի Ներքինապետը գարձեալ վրդովված կերպով մտաւ Սիրիի վրաները: Նա պատմեց, որ խաղից սատանի յանդիմանութիւն ստացաւ. Թէ ինչու նա պահում է իր մտաւ մի քրիստոնեայ պատանի, նրան տեղ է տուել իր վրանում, նրա հետ միասին ուտում է, խմում է, քանի որ այդ հանգամանքն է մահմեդականների ատելութիւնները, և մանաւանդ անիծալել է մի ներքինապետի, որ անարգալը կանանցի հետ յարաբերութիւն ունի:

—Ես չեմ հասկանում, այսուհետ ինչ մի անվայել բան կայ, հարցրեց Սիրիին, կարելով ծերունու խօսքը:

—Անիծեցին այն է, որ քրիստոնեան իմ վրանում ապրելով, կարող էր պղծել ինձ, իսկ ես նրանից պղծված լինելով, կարող էի մեռ մահմեդականներին պղծել, պատասխանեց ծերունին, ինքն էլ ծիծաղելով իր խօսքերի վրա:

Խոսակցութիւնը այն տարբերութիւն պատանու մասին էր, որ խաղի վրանի առջև կատարված եղելության ժամանակ, դուրս պրծան բոլորի միջից, ուր նրա ծնողները, ձեռքները դէպի երկինքը բարձրացրած, էղիմ-Քիշեն ապաղաչելով, սրվում էին. Նրանցի ներքինապետը վիր առնել էր մեռ շնչատպան. կիսամեռած պատանուն և ապ օրից դարմանում էր նրա մարմնի տրված տեղերը: Պատանին վերքերի բժշկութեան արնեռաբ խիստ սարսափան լինելով պարտիզների մեռ, ներքինապետը բուսական հմուտ էր նրա մէջ: Այս պատճառով պատանու տառապանքը շատ չուշացաւ. Բայց ծերունին հասատանում էր, որ նա դեռ շատ տկար է, և դեռ երկար ժամանակ պէտք է պառկած մնայ անկողնի մէջ, որովհետև նրանից պահանջում էին, որ պատանուն մահմեդականացնէ: Նա որքասրէ յետաձգում էր նրանց պահանջը, զանազան պատճառներ բերելով: Բայց մէկիկ ծերունին մահմեդականութիւնն ընդունելու որը, երբ պարտիզների մոլեռանդութիւնը ուժգին գրգռված էր, այլ ևս ծերունուն հանդուրժութիւն չէին տալիս, մինչև անգամ խաղից սատանի յանդիմանութիւն ստացաւ.

—Պէտք է նրան այստեղից հեռացնել, ասաց սիրիները տխուր ձայնով:

—Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց ծերունին,—և այդ մասին բոլոր պարտաւորութիւնները տեսնված են: Բայց մի բան բնա ստանալի գժտարութիւն է պատճառում.

—Ինչ բան:

Պատանին պատմեց, թէ պատանին բուսական վարչչանասակ և գեղեցկագէմ է, թէ նրան տեսնողները անդադար կրկնում էին, որ այդ պատանին շատ յարաբերութիւններ ունի խաղի մանկլիկների կողքը մնալու. և խաղին ապատատրութիւն անելու, քան գեղջուկ գոռիան վարելու: Այդ տեսակ բնութիւնները մինչև անգամ հասել են խաղի ականջին: Նա մեծագամ հրամայեց, թէ կամենում է տեսնել պատանուն, բայց ծերունին նրան խրատեց, ասելով, թէ նա հիւանդ է, տեղիցը շարժվել չէ կարողանում.

—Այժմ ես մտածում եմ, առաջ տարաւ ծերունին,—եթէ պատանուն փոխադրենք լինեմ սեր կողմերը, կամ ուզարկենք լինեմ նրան Ցարքն, անպատճառ կը գտնեն նրան և չեռ կը բերեն, որովհետև այդ բոլոր տեղերը խաղի ձեռքը կը հասնի: Հարկաւոր է նրան մի այնպիսի երեկիր ուղարկել, որ խաղի իշխանութիւնից դուրս լինեն:

—Ուղարկեցէք Էջմիածին, այնտեղ ասանցին ներ են տիրում, պատասխանեց սիրիները:

—Ամենեղ նոյնպէս յարմար չէ, մի գաղանի ձեռքից պատանուլով, մէջս գաղանների ձեռքը պիտի դնեմ: Պէտք է մի քրիստոնեայ տեղ ուղարկել և վերատեղի ունէլի յարմարը չը կայ.

—Այդ լաւ էք մտածել, բայց այնուհետ ում մոտ կուղարկէք: Նա այնքան մանուկ է, որ չէ կարելի ասանց խնամակալի մի անծանօթի երկիր ուղարկել.

—Ես բոլոր պատասխանութիւնները կարդացել եմ, սիրիին, ծերունի Ամենը այնքան լիմար չէ, որ այդ բաները չը հասկանայ.

Եւ նա սկսեց պատմել իր կարդացածները, ասաց՝ երբեմ հաստատիմ մարդիկ գնչերով կը ստանեն պատանուն, կը հասցնեն վրատանի Մցխէթ քաղաքը: Վրատանի Ամենը ունի մի լաւ բարեկամ՝ հայազգի Որբելեան իշխանին: Պատանուն կը յանձնեն նրան իր նամակի հետ, որի մէջ գրած է Նրա հետ պատահած անցքերը, և խնդրում է ասելով այդ անբախտ որբին իր խնամակալութեան ներքոյ: Գնչուներին յայտ ունի, որ իշխանը ամենայն ուրախութեամբ կը կատարէ իր խնդիրքը, որովհետև անցեալ տարի, երբ նա գործով եկաւ. խաղի մոտ, ծերունին նրան մեծ ծառայութիւններ արեց, և իշխանը ասաց նրան. «Երանի թէ, մի գործ պատահէր, որ նրա բարեգործի քո պարտաւորութիւնից դուրս գայ:»

—Բայց թիւրք կը պատասխանեն գու, երբ պատանու անյայտանալուց յետոյ, քեզանից կը հարցնեն՝ ուր է նա:

—Ես մի քանի որ գաղանի կը պահեմ նրա փախուստը, մինչև նա կանցնի վրատանի հողի վրա. յետոյ պարզ կերպով կը յայտնեմ, թէ փախել է, բայց ես ինքս էլ չը գիտեմ, ուր է գնացել:

—Այդ բոլորը շատ լաւ է խորհված, ասաց սիրիները ուրախութեամբ,—բայց երբ մեզիր ես ճանապարհ դնել:

—Հէնց այս գիշեր. Դա այժմ ամենքան առաջ է, որ կարող է մի քանի որ ձիու վրա հանապարհորդել:

—Ուրեմն մտածենք կարգնել պէտք չէ. ասաց սիրիները յուսալցնելով,—բայց ես կը ցանկանայի այդ պատանուն տեսնել նրանց քան նրա պատասխանը տալը:

Որովհետև կանանցը բերել նրան անկարելի էր, վեռնցին, կէս գիշերին, երբ բոլորը քնած կը լինեին, սիրիները գնաց ծերունու վրանը և այնտեղ տեսնել պատանուն:

Գիշերը սառնամանիք էր. Ամպամած երկնքից մի ասաց անգամ չէր երեւում. Անասուն ծառերը չարժվում էին մեղմ քամուց, տարածելով իրանց չարդը մի խորհրդաւոր, կախարդական տարածութեան: Հովվեցիների վրանները հեռու, մի ձորի մէջ գիշերային լուսնի ներքոյ ընդհատվում էր խուլ հնչեղանքով. մի պատանի, գլուխը դրած փարդի բրդեայի վրա, լաց էր լինում: Արասաւոր հեղեղի նման թափվելով նրա աչքերից. Քրքում էր հողը, որից կազմված էր այդ բրդեայը: Այսուհետ թողված էին գիշերները այն թշուառների, որ բանաբեռան, հարատեւարարութեան երեսից հալածված, իրանց անձերը այրեցին խաղի գաղտարանի առջև. Ինքնակամ մտով նրանք բարգելցին անիրաւ տանջանքներ, անպիտանութեան գէմ. իրանք մեռան, բայց անարդարարութիւնը մնաց...

Պատանին լաց էր լինում, և կարծես, նրա անլսելիների կարդերից գուրս էին թափում այս նաստանդները. «Թող մեռ լինի հայրենիքի այդ սարը հողը, որ ծածկում է ձեր մարմինները, թող մեռ լինեն այդ անասուն ծառերը, որ տարածում են իրանց հովանին ձեր գերեզմանի վրա, թող մեռ լինեն հայոց լեռները և նրանց մէջ բնակվող բոլոր շարք և բարի ոգիները, որոնք անխնայաբար եղան ձեր տառապանքին, վերջապէս թող մեռ լինի այդ անարդի երկիրը, որ տեսաւ ձեզ կրակի բոցերի մէջ, որ հատուց ձեր սրբազան մարմինների բարձրացած ձեռնեները ծաղրը և գաղանաբար տանջարարաբար մեռաց զոհերի տանջանքը...—Ես երդվում եմ, երդվում եմ հայ լինելուի իրերի սիրելով, որ հանգած է բանաւորի ձեռքով, երդվում եմ հայ կը-

պէս զի քրիստոնեաների թիւով գերակշռեն Հայաստանի մահմետականների թիւը, կամ թողնելով կրօնական տեսակէտը, և հիմնվելով ցեղական տեսակէտի վրա, ջանան ապացուցանել որ Հայաստանցի բնակիչների մեծ մասը ինչ կրօնին և պատկանէին նրանք՝ լուսաւորչականներ, կաթոլիկներ, բողոքականներ, յունադաւաններ և մահմետականների մեծ մասը (թէ քիւրդեր և թէ թիւրքեր), բոլորն էլ հայեր են, կամ հայից դարձածներ, հայոց ծագումի մարդիկ են: Ուրեմն Հայաստանին տրվելի ինքնավարութիւնը բոլորին էլ անխտիր կերպով անհրաժեշտ է, այդ նահանգի բոլոր բնակիչներն էլ մի և նոյն իրաւունք ունեն այդ ինքնավարութեան վրա, բոլոր Հայաստանցիների էլ, թէ քրիստոնեաների և թէ մահմետականների շահերը այդ հարցի մէջ ընդհանուր են:

Ահա այն մեծ, թէև տարրական ճշմարտութիւնը, որ վերջապէս պէտք է հասկանան թիւրքաց հայերը և նրանց առաջնորդները և որին պէտք է ձգտեն ամեն ոյժով, ամեն միջոցներով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Դեկտեմբերի 30-ին 80.

Կատարելով մեծ ուրախութեամբ ինձ վրա դրված յանձնարարութիւնը երկու տիկինների, այն է Եղիսաբէթ Պոպովի և Օկսինիա Կազաչկովի կողմից, ձեր խմբագրութեանը 84 ռուբլ գումարը հասցնելու համար, որ հաւաքվեցաւ յոգուտ Վանի սովատանջների այդ երկու տիկինների ջանքերով, աւելացնում եմ որ ճանաչելով մեր քաղաքի հայ հասարակութեան անտարբերութիւնը դէպի ազգային գործերը, անկարելի է մեծ յարգանքով չը վերաբերվել դէպի պատւական երկու տիկինների կատարված գործը, փոստի ծախսը ես եմ յանձն առել: Ահա նուիրատուների ցուցակը: Մարտա Բոստովանով 10 ր., Մաղթաղինէ Ստեփանով 3 ր., Կատարինէ Թավրիզով 1 ր., Եղիսաբէթ Մուրադխանով 1 ր., Աննա Բալանդուզով 3 ր., Եղիսաբէթ Սաղրաղով 3 ր., Մարգարիտ Բոստովանով 7 ր., Մանուշակ Սունդուկով 5 ր., Օսաննա Ագանով 2 ր., Աննա Սունդուկով 2 ր., Մարիամ Ասատուրով 3 ր., Օկսինիա Գալուստով 1 ր., Մէլանիա Մալաֆէէվ 3 ր., Եղիսաբէթ Աթանասով 2 ր., Աննա Մէլքումով 1 ր., Օկսինիա Մէլքումով 1 ր.. Անյայտ 1 ր., Եղիսաբէթ Կիրէեվ 1 ր., Սարա Պոպով 1 ր., Անյայտ 50 կոպ., Մէլանիա Սոլովիեվ 50 կ., Անյայտ 1 ր., Մարիամ Աթաբէկով 5 ր., Մանուշակ Պապաեվ 3 ր., Սուսանա Արաբով 1 ր., Մարգարիտ Ջալաբով 1 ր., Ոսկի Ֆաբրիկանտով 1 ր., Թագուհի Ֆաբրիկանտով 1 ր., Եղիսաբէթ Իւզբաշեվ 1 ր., Անյայտ 3 ր., Աննա Բասինջագով 1 ր., Անյայտ 3 ր., Յովհաննէս Մասումով 10 ր., Ուսանա Յարութիւնով 1 ռուբլ: Ընդամենը 84 ռուբլ:

Յովհաննէս Կիտաեվ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԴԶԼԱՐԻՑ մեզ հաղորդում են, որ թեմական վերատեսուչ պ. Կաճկաճեանը հիւանդութեան պատճառով հրաժարական է տուել իր պաշտօնից:

—

Մեզ հաղորդում են ՄՕԶԴՕՔԻՑ, որ պ. Դանջումեանը մտադիր է իր հաշվով կառուցանել մի նոր չէնք տեղային օրիորդաց դպրոցի համար: Յարգելի պարոնը արդէն ստացել է դպրոցի, նահանգային արխիտեկտօրից կազմված և նահանգապետից հաստատված, թէ յատակագիծը և թէ նախահաշիւը: Ծախքը հասնում է 17,500 ռուբլու: Դպրոցը կունենայ ընդարձակ դահլիճ, որը մի և նոյն ժամանակ կը ծառայէ թատրոնական ներկայացումների համար:

—

ԹԻՖԼԻՍԻ բէալական դպրոցի հայ աշակերտներից մէկը մեզ հաղորդում է. «Չը նայելով, որ մենք կրօնի դասատու ունենք, չը նայելով, որ նա ռոճիկ է ստանում, բայց ահա ամբողջ երկու ամիս է, որ աշակերտները նրա երեսը տեսած չեն, թէև տէր հայրը ոչինչ պատճառ չունէր դասերից յետ ընկնելու: Կառավարութեան դպրոցներում առհասարակ մեր կրօնուսոյցների և հայոց լեզուի ուսուցիչների անփոյթութիւնը դէպի իրանց յանձն առած պարտականութիւնները աւելի ևս չարժում են հայ աշակերտների արհամարհանքը դէպի իրանց մայրենի լեզուն և դէպի իրանց կրօնը, քան թէ մի ուրիշ պատճառ:»

—

Լսում ենք, որ Սուրբ Սարգսի եկեղեցում նոյնպէս գողեր են մտել: Թէև այդ երկու շաբաթվայ մէջ մի քանի եկեղեցիներ կողոպտվեցան, բայց դարձեալ մեր եկեղեցիների երէցփոխանները չեն մտածում եկեղեցիները օրինաւոր պահպանութեան տակ դնելու և թողել են ծերունի մղոսիների հսկողութեանը: Ինչ երաշխաւորութիւն կայ, որ այդ աւազակները ընտանի գողեր չեն:

—

«Кавказскій Курьеръ» լրագիրը հաղորդում է իրրև լուր, որ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային գանձարանը վերաքննող յանձնաժողովը մի քանի անկարգութիւններ է գտել: 1) Քաղաքային գանձարանի սունդուկի մէջ, որ կնքած էր առաջուց, փող կար 6,722 ր. 20 կ., 2) գանձապետի չը կնքված սեղանի մէջ գտնվեցաւ 3005 ր. 3) Թիֆլիսի գանձատանը պահված արկղի մէջ 113,140 ր. 46 կ., և Թիֆլիսի առևտրական բանկի մէջ 85,876 ր. 44 կ.: Թէ արդեօք այսքան դրամ պէտք է լինէր գանձարանի մէջ, այդ կերևայ հաշուապահական թղթերից: Յանձնաժողովը դեռ չէ քննել այդ թղթերը, այլ բաւականացել է նայելով գանձարանական օրագիրը, որ կազմված է գանձարանը կնքելուց յետոյ: Մի և նոյն ժամանակ փողի մի մասի տեղ ներկայացրել է զանազան անձանց մի մեծ ցուցակ, որոնք զանազան ժամանակներում ստացել են մօտ 18,000 ր.: Այդ փողերը տուած են վարչութեան մէջ ծառայողներին: Երևում է, որ մի անձին տուած է 750 ր., միւսին 720 ր., երրորդին 660 ր., չորրորդին 570 ր. և այլն և առանց մուրհակների կամ ստորագրութեան: Բացի այդ յայտնվեցաւ, որ քաղաքային գանձարանը երբէք չէ ենթարկվել յանկարծակի քննութեան, իսկ անցեալ 1880 թ. նոյեմբերից ամսական սովորական քննութիւններ էլ չեն եղել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները: Յունվարի 31-ին ըսկսված համայնքների ժողովի նիստը տևեց մինչև փետրվարի 2-ի առաւօտեան 9 ժամը: Այս ժամանակ ժողովը չափազանց անկարգ տեսք ունէր. յատակի վրա թղթերի և նամակների փաթեթներ էին թափված, իրլանդական պատգամաւորների նստարանների վրա ածված էին լրագրական յօդուածներ և այլ նիւթերը, որոնց նրանք գործ էին ածում վիճաբանութիւնները երկարացնելու համար: Ժողովի մէջ հազիւ 40 անդամ էր գտնվում: Ժամի 9-ին եկաւ Գլատստոն, որին ծափահարութիւններով ողջունեցին: Այդ ժամանակ խօսում էր իրլանդական պատգամաւոր Բիգգեր, որ հաւատացնում էր, թէ Իրլանդիայի մէջ կատարված անկարգութիւնները չափազանցեցրած են: Ժամի 9-ին ներկայացաւ ժողովի սպիկեր և տեսնելով, որ խօսողը չափազանց երկարացնում է իր ճառը, յայտնեց, որ այլ ևս թոյլ չի տայ շարունակել վիճաբանութիւնները: Այդ ժամանակ պատգամաւորները նորից եկան և դահլիճը լցվեցաւ: Սպիկեր դիմեց ժողովին հետևեալ ճառով: „Իրլանդիայի մէջ անձնականութիւնը և գոյքը պահպանելու մասին առաջարկութեան օրակարգից դուրս քննելու հարցը արդէն 5 օր է, ինչ վիճաբանվում է և այժմեան նիստը 40 ժամ է շարունակվում:

նոջ և հայ աղջկայ պատուով, որ բռնաբարված է մահմեդականի կրքերով, երդվում եմ հայ երկրագործի արօրով և քրտինքով, որոնց վաստակը հարստահարվում է, երդվում եմ հայրենիքի սուրբ յիշատակով, որ օտարի լծի տակ ճնշվում է,— վերջապէս երդվում եմ այդ գերեզմանով, որ ամփոփում է ձեր անմեղ մարմինները, ես պիտի վրէժխնդիր լինեմ... պիտի վրէժխնդիր լինեմ չարութեան, անարդարութեան և բռնութեան դէմ. Այս րոպէից հանդիսաւոր ուխտ եմ դնում կրուել և մինչև մահ կռուել հայրենիքի ազատութեան համար: Այն օրը ձեր ոսկերքը կը հանդատանան այդ մթին գերեզմանի մէջ, երբ ազատութեան շունչը խաղաղ, կենսաբեր ոգով կը փչէ նրա վրայով»....

Այդ խօսքերից և ոչ մէկը չարտասանեց պատանին: Միայն նրա սիրտը անգիտակցաբար լցված էր այդ զգացմունքներով: Հօր և մօր, ազգականների և բարեկամների հոգիները նոյն գերեզմանի խորքից ներշնչում էին նրա մէջ այդ մտածութիւնները: Նա այնքան մանուկ չէր, որ զգացած չը լինէր բռնակալ ձեռքի դառն հարուածները: Նրա մարմնի վէրքերը դեռ ոչ բոլորովին բուժված էին, իսկ սիրտը լի էր վրէժխնդրութեան դառնութեամբ:

Նա վերջին անգամ համբուրեց գերեզմանը և վեր բարձրացաւ:

—Մնաս բարեաւ, սիրելի մայր,—մնաս բարեաւ, սիրելի հայր,—մնացէք բարեաւ, սիրելի բարեկամներ, ասաց նա և հեռացաւ:

Ներքինապետի վրանում Սիրին վաղուց ըսպասում էր պատանուն: Ծերունի Ահմէդը շատ անհանգիստ էր նրա բացակայութեան համար: Այնքան օրեր պատանին ապրում էր նրա վրանում, խիստ տակաւ անգամ էր պատահել, որ նա մի ուրիշ տեղ գնացած լինէր: Այժմ ուր պիտի գնացած լինէր: Ոչ ոք չը գիտէր: Ներքինապետի ծառաներից ոչ մէկը չէր տեսել նրան վրանից դուրս գալու ժամանակ:

Վրանի վարագոյրները իջեցրած էին: Տիկինը միայնակ նստած էր այնտեղ, իսկ ծերունի ներքինապետը կանգնած էր նրա սպասում: Երկուսի մէջ ևս տիրում էր մի տեսակ լարված լռութիւն. երկուսն էլ անհանգիստ էին այն մտքով, թէ ինչ եղաւ պատանին: Հեռու, անտառի մէջ թէ ձիաները, թէ մարդիկը պատրաստ էին, որ նրան պիտի տանէին: Դիշերը անցնում էր. պէտք էր շուտով ճանապարհ ընկնել, որ մինչև լուսանալը կարողանային բաւական հեռացած լինել խանի կացած տեղի սահմաններից:

—Ի՞նչ եղաւ, հարցրեց տիկինը անհամբերութեամբ.—ես կասկածում եմ, որ նրա հետ մի վատանդ պատահած լինի:

—Այստեղ ամեն բան կարող է պատահել, տիկին, պատասխանեց ծերունին շտապած կերպով.—այստեղ ծիտն էլ իր բոյնի մէջ ապահով չէ:

Լսելի եղաւ շան հաչելու ձայնը: Ծերունին դուրս գնաց: Մի քանի վայրկեանից յետոյ նա վերադարձաւ ուրախ դէմքով, իր հետ բերելով պատանուն: Բայց վերջինիս գունաթափ դէմքը չէր ցոյց տալիս որ և իցէ ուրախութիւն. խորին տխրութիւնը նկարված էր նրա խաղաղ, սևորակ աչքերի մէջ: Տիկինը տեսնելով գեղեցիկ, վայելչահասակ պատանուն, բոլորովին զմայլեցաւ. նրա քնքոյշ, սիրող սիրտը լցվեցաւ այն քաղցր զգացմունքով, որ տիրում է հարազատ քրոջ սրտին, երբ նա առաջին անգամ տեսնում է կարոտած եղբօրը, երկար տարիների անջատումից յետոյ:—«Ո՛րքան սիրուն է, որքան մեծացել է իմ եղբայրը», ասում է նա և փաթաթվում է նրա պարանոցին:

Զգացմունքի այդ տեսակ արտայայտութիւններ տեղի չունեցան: Պատանին տիկնոջ ոչ եղբայրն էր և ոչ ազգականը, այլ մի որբ, հայրն ու մայրը կորցրած տղայ, որ ինքն էլ մի բախտով ազատված էր նոյն կրակի բոցերից, որ այրեցին նրա ծնողներին: Պատանու այդ վիճակը ազդում էր տիկնոջ մէջ ցաւակցութիւն, մաքուր սիրոյ հետ խառնված:

—Ի՞նչպէս է անունը, հարցրեց նա, դառնալով դէպի ներքինապետը:

—Դաւիթ ձեր ծառայ, պատասխանեց ծերունին:

—Դաւիթ, բացականչեց տիկինը խորին տհաճութեամբ, կարծես ափսոսելով, որ մի այդպիսի գեղեցիկ, անարատ պատանին կրում էր իր չարագործ հօր անունը:

Բայց մանկահասակ Դաւիթը մնացել էր բոլորովին զարմացած, ամօթխածութիւնից չը գիտէր ինչ անել, երբ նկատում էր՝ մի նաղելի, շքեղ կերպով հագնված կին նրա վրա ուշադրութիւն էր դարձնում: Այդ կինը, անտարակոյս, խանի հարեմներից մէկը պէտք է լինէր: Բայց միթէ պարսկի կնոջ մէջ կարող էին լինել այն աստիճան քնքոյշ զգացմունքներ դէպի մի անբախտ հայ պատանի:—Այդպէս էր մտածում նա, երբ ծերունի ներքինապետը ասաց նրան, թէ տիկինը քրիստոնեայ է, և յայտնեց նրա ում աղջիկ լինելը:

Կարծես, մի սուր ցցեցին պատանու սրտի մէջ. նա լսեց այն մարդու անունը, որ իր հօր, իր մօր, իր ազգականների դահիճն էր, իսկ այդ նազելի կինը—նրա աղջիկը: Տիկնոջ բոլոր արժանաւորութիւնները, որ այնքան յարգելի էին երևում նրա աչքում, իսկոյն կորցրին իրանց նշանակութիւնը: Պատանին այժմ նայում էր նրա վրա, որպէս մի թշնամու վրա, որին պատրաստ էր պատառոտել: Նա երեսը շուռ տուեց և կամենում էր դուրս գալ վրանից:

—Հասկանում եմ քո արդար վրդովմունքը, ազնիւ պատանի, ասաց տիկինը, նրա ձեռքից բռնելով.—բայց անբախտ աղջիկը ինչով է յանցաւոր, որ քաւէ չարագործ հօր մեղքը... Ես հաւատում եմ Աստուծոյ արդարադատութեանը, և յոյս ունեմ, որ այդ բոլոր չարիքներին հատուցում կը լինի. նեղեալները կը վայելեն ազատութիւն, իսկ նեղիչները սոսկալի դատապարտութիւն...

—Ո՞ր աշխարհում, հարցրեց պատանին, դեռ ոչ բոլորովին հանդստացած լինելով իր վրդովմունքից:

—Այս աշխարհում, պատասխանեց տիկինը մարգարէուհու եղանակով.—դառնութեան բաժակը մինչև բերանը լցված է... մի կաթիլ ևս,—ահա նա կը թափվի...

—Հաւատում եմ ձեր զուշակութեանը, տիկին, պատասխանեց պատանին ոգևորութեամբ, և բռնելով նրա աջը, սեղմեց իր շրթունքի վրա:—Դուք կրկնում էք մի և նոյն խօսքերը, որ մի քանի րոպէ առաջ ես լսեցի իմ անբախտ ծնողների գերեզմանից: Այնտեղից մի ձայն նոյնպէս ասում էր, թէ «դառնութեան բաժակը լցված է»... Ես լսեցի կոչող ձայնը և ուխտեցի մինչև մահ կռուել անարդարութեան դէմ:

Եւ իրաւ, պատանուն այնպէս էր թւում, որ այդ խօսքերը նա առաջին անգամ չէր լսում, թէ նա լսեց այն ժամանակ, երբ ինքը հոգեկան դառն խռովութեան մէջ, ընկած ծնողների հողաժամբարանի վրա, տխուր և ցաւալի կերպով արտասուք էր թափում: Այժմ նոյնը լսում էր բարեսիրտ կնոջ բերանից:

Ծերունի ներքինապետը ակնարկեց, թէ պատանին ուշանում է, թէ ժամանակ է ուղևորվելու: Բայց տիկինը բոլորովին յափշտակված էր նրա խօսքերով. «ես ուխտեցի մինչև մահ կռուել անարդարութեան դէմ»... Ի՞նչն էր ներշնչել այդ վրէժխնդրական զգացմունքը նրա մանուկ սրտի մէջ, ծնողների ցաւալի մահը, թէ ընդհանուր ժողովրդի անբախտ դրութիւնը: Այդ միտքը սաստիկ հետաքրքրում էր վշտալի տիկնոջը: Նա ցանկանում էր խօսել, երկար խօսել վաղահաս ցաւերով տանջված այդ պատանու հետ, ցանկանում էր շօշափել նրա կոտրած սրտի բոլոր թաղնված վէրքերը, բայց ներքինապետը դարձեալ շտապեցրեց, թէ ժամանակը անցնում է, թէ պէտք է շուտով ճանապարհ դնել նրան:

—Որ ուխտը՝ կռուել անարդարութեան դէմ, ասաց տիկինը բռնելով պատանու ձեռքը,—պէտք է լինի ամեն մի հայ մարդու ուխտը, որ

Անշան փոքրամասնութիւնը աշխատում է երկարացնել վիճաբանութիւնները ժողովի կամքի հակառակ։ Այդպիսի դժուար դրութիւնը պահանջում է, որ սպիկերը և ժողովը խառնվեն գործի մէջ։ Երևում է, որ մեր սովորական կանոնադրութիւնը անբաւականացուցիչ է վիճաբանութիւնները կանոնաւորելու համար։ Այդ նշանաւոր առաջարկութիւնը, որ յիշված էր գահական ճառի մէջ և որ երկրի ապահովութեան համար անհրաժեշտ է համարված ժողովի մեծամասնութենից, յետաձգվում է անշան փոքրամասնութեան շնորհիւ, որ այդ նպատակին հասնելու համար դիմում է ժողովի համար վիրաւորեցուցիչ միջոցներին։ Համայնքների ժողովի արժանաւորութիւնը, պատիւը և հեղինակութիւնը պահանջում են, որ այդ գործին վերջ դնվի։ Այժմեան կանոնադրութիւնը այդ կողմից արգելում է ժողովին կատարել իր կամքը, ուրեմն անհրաժեշտ է դիմել մի նոր, բացառական միջոցի։ Իմ կարծիքով, ես կատարած կը լինեմ ժողովի կամքը և կը ստանամ նրա հաւանութիւնը, եթէ իսկոյն կընդհատեմ վիճաբանութիւնները և կառաջարկեմ անյապաղ սկսել քուէարկութիւն։ Ես առաջարկում եմ ժողովին, որ նա միջոցներ գտնէ վիճաբանութիւնների կանոնաւորութիւնը ապահովելու համար, կամ աւելացնէ իր սեփական հսկողութիւնը, կամ աւելի մեծ իշխանութիւն տայ իր նախագահին։" Այդ խօսքերից յետոյ սպիկեր սկսեց ձայներ հաւաքել և կառավարչական առաջարկութիւնը ստացաւ 164 ձայն 19-ի դէմ։ Այնուհետև իրլանդացի պատգամաւորները բաւական ժամանակ կանչում էին „իսկ պատգամաւորների արտօնութիւնները" ու մի առ մի դուրս էին գնում դահլիճից, հեգնութեամբ սպիկերին գլուխ տալով։ Առհասարակ ժողովը աւելի նեղացաւ այդ անցքից, քան թէ ուրախացաւ։ Բոլոր ժամանակը մինչև այդ գործողութիւնը կատարվում էր, սպիկեր ոտքի վրա կանգնած էր։ Այնուհետև սկսեցին կարդալ ֆօրստերի առաջարկութիւնը, որի երկրորդ ընթերցանութիւնը նշանակվեցաւ կէսօրին։ Առաջքան թէ Նախագահը յայտնեց նիստի ընդհատումը, Դլադստոն սկսեց խօսել։

„Պարլամենտական վիճաբանութիւնները կանոնաւորելու համար, ասաց նա, ես մտադիր եմ հետևեալ առաջարկութիւնն անել։ Եթէ կառավարութիւնը մի առաջարկութիւն կանի, որի քննելը անհրաժեշտ է պետական գործերի դրութեան պատճառով, եթէ սպիկերի առաջարկութեամբ 40 անդամներ այդ հարցի վճռելը անհրաժեշտ կը համարեն, սպիկեր իրաւունք կունենայ անյապաղ քուէարկութիւն սկսել, առանց վիճաբանութիւնների։"

ԿՈՄՍ ՄՕԼՏԿԷԻ ՆԱՄԱԿԸ

Լրագիրների մէջ տպված կոմս Մօլտկէի նամակից, որի մասին „Մշակի" անցեալ համարներից մէկի մէջ տեղեկութիւն տուինք ընթերցողներին, հետևեալ քաղուածքներն ենք անում։ „Ամենից առաջ, գրում է կոմսը, ես գնահատում եմ այն մարդասիրական ձգտումները, որոնց նպատակն է պատերազմից առաջացած դժբաղդութիւնների առաջն առնել։ Ցաւիտենական խաղաղութիւնը մի ցնորք է և դեղեցիկ ցնորք չէ։ Աստուծոյ ստեղծած աշխարհի համար պատերազմը անհրաժեշտ մի պայման է։ Պատերազմը զարգացնում է մարդկային ամենազգնիւ ձգտումները՝ քաջութիւնը, անձնազոհութիւնը, հաւատարմութիւնը և պարտաճանաչութիւնը։ Զինուորը զոհում է իր կեանքը։ Ես համաձայն եմ, որ մարդկութեան բարք ու վարքի նրբութիւնը պէտք է ազդէ նոյնպէս և պատերազմելու եղանակի վրա։ Բացի այդ վարք ու բարքի նրբութիւնը կարող է հասցնել այն նպատակին, որին անկարելի է հասնել պատերազմական միջազգային օրէնսդրութեան օգնութեամբ։ Մարդկութեան աջողութիւնը պատերազմելու եղանակի մէջ նոյն նրբութեան հետևանքն է։ Համեմատեցէք երեսնամեայ պատերազմները այժմեան պատերազմների հետ։ Ընդհանուր պարտադիր զինուորագրութեան օգնութեամբ զօրքերի մէջ մտնում են լուսաւորված մարդիկ։ Դա մեծ առաջադիմութիւն է։" Այնուհետև Մօլտկէ նկատում է, որ պատերազմի ամենամեծ բարութիւնը նրան արագութեամբ կատարելն է։ Այդ նպատակի համար կարելի է բոլոր միջոցները գործ դնել, բացի կատարելագէս վատերից։ Պատերազմը աջողեցնելու համար պէտք է վնասել թշնամի կառավարութեան, բոլոր միջոցներին, ֆինանսներին երկաթուղիներին, պահեստներին և մինչև անդամ նրա հեղինակութեանը։ Այսպիսի եռանդով կատարեց Գերմանիան իր վերջին պատերազմը Ֆրանսիայի հետ։ Պատերազմի բաղդը երկու ամսվայ մէջ որոշվեցաւ և նա զայրացած բնաւորութիւն ստացաւ միայն այն ժամանակ, երբ Ֆրանսիական ազգային կառավարութիւնը վճռեց շարունակել պատերազմը էլի չորս ամիսներ։ Վերջը կոմս Մօլտկէ նկատում է, որ եթէ բոլոր պետութիւնները կընդունեն դերիներին, հիւանդներին և առողջապահական կանոններին վերաբերեալ առաջարկութիւնները միջազգային ինստիտուտի կողմից, դա էլ մեծ առաջադիմութիւն կը լինի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բարտելիմի Սենտ-Իլերի ասած ճառի մասին որ արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, «Temps» լրագիրը յայտնում է հետևեալ կարծիքը, որ գրեթէ չէ զանազանվում հանրապետական միւս լրագիրների հայեացքներից։ Մենք չենք կարող հաւանութիւն չը տալ արտաքին գործերի մինիստրին, նկատում է լրագիրը, այն բանի համար, որ նա սկսեց պաշտպանել իր նախորդների գործունէութեան եղանակը։ Մենք չենք մեղադրում մինիստրին որ նա ինքնուրոյն կերպով մեկնեց Բերլինի կոնֆերենցիայի վճիռները։ Այդ մեկնութիւնները եթէ մի կողմից չեն համապատասխանում կոնֆերենցիայի վճիռներին, դրեթէ ապացուցանում են մինիստրի ցանկութիւնը աշխատել, որ Ֆրանսիան այսուհետև վտանգաւոր միջոցների չը դիմէ։ Ցաւալի է, որ մինիստրը աւելի եռանդով չը պնդեց և չը պաշտպանեց այդ կէտը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 4 փետրվարի։ Տեղական առաջնորդները Մերվի մէջ խորհրդակցեցին և վճռեցին ռուսներին չափազանց ընդդիմադրել։ Պատերազմական բոլոր ոյժերը կենտրօնացրած են Տեղան անցնելուն արգելելու համար, որտեղ հասաւ Մակդումպուլի-խան։ 5000 տեկինցիներ և 30 առաջնորդներ Մերվից Կանդահար ուղևորեցան օգնութիւն խնդրելու համար։ Գեներալ Սկոբելեվ մտադիր է պարսից հողով անցնել։ Լուր է տարածված, որ թիւրքմենները մտադիր են գետի ընթացքը փոխել դէպի արևելք, Մերվի ուղղութեամբ, հակառակորդին ջրից զրկելու համար։

ԿԻԵՎ, 4 փետրվարի։ Երէկ նահանգական դատարանի մէջ վերջացաւ հրէաների դործը կալուածատէր Պօդգօրսկու մուրհակները 300,000 ր. գումարի կեղծելու մասին։ Գործը քննվում էր չորս օր։ Բոլոր վեց մեղադրվածներն էլ երդվեալ դատաւորներից մեղաւոր են յայտնված, երկուսի պատիժը մեղմացրած է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի։ Կալանաւորված է գաղտնի պօլիցիայի գործակատարը, որի ել և մտից դրքի մէջ նշանակված էր ամսական մուտք 150 ր.։ Նա խոստովանվեցաւ, որ նիհիլիստներից փող էր ստանում փոքրիկ ծառայութիւնների համար։ Գործակատարը համաձայն չէր յեղափոխականների հաղորդութիւնների հետ իր գաղափարների ձևի մասին։ Նրա դէմ ծանր մեղադրանք կայ յեղափոխականներից կաշառվելու վերաբերութեամբ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մտածում է հայրենիքի փրկութեան համար։ Դու, գուցէ քո ծնողների ցաւալի վախճանից զբրդված, ուխտեցիր վրէժխնդիր լինել բռնութեան դէմ,—բայց մտածիր, որ ամբողջ հայ ժողովուրդը այրվում է, խորովվում է, ոչնչանում է նոյն բոցերի մէջ, որ լափեցին քո անբախտ ծնողներին, նոյն բոցերի մէջ, որոնց միջից դու մի բարի բախտով դուրս պրծար։ Նոյն բոցերը թողեցին քո մարմնի վրա բռնութեան ձեռքի անջնջելի դրոշմը, ամեն անգամ, երբ կը նայես նրա վրա, յիշիր, որ դա քո ուխտադրութեան կնիքն է, յիշիր, որ դու չարաչար կը մեղանչես Աստուծոյ և քո ծնողաց հոգիների առջև, եթէ չը կատարես այն սուրբ խոստմունքը, որ ուխտեցիր նրանց գերեզմանի վրա։

Պատանին լռութեամբ լսում էր տիկնոջ խրատները, որպէս մի ուխտաւոր, որ խորին ջերմեռանդութեամբ լսում է քրմուհու պատգամները։ Տիկինը յայտնեց, թէ զանազան տխուր հանգամանքներ ստիպում են առժամանակ հեռացնել նրան հայրենի երկրից, և ծերունի ներքինապետի հետ խորհելով, վճռվեցաւ նրան ուղարկել Վրաստան։ Պատանին յանձնարարական նամակներ կը տանէ իր հետ և այնտեղ թէ խնամակալութիւն և թէ պաշտպանութիւն կը գտնէ մի հայազգի իշխանից, որը բարձր պաշտօն է վարում վրաց թագաւորի մօտ։ Տիկինը խոստանում է միշտ և ամեն ժամանակ օգնել պատանուն, որը համարձակ կարող է դիմել իրան, եթէ որ և իցէ բանի մէջ պէտք կունենայ։

—Ա՛ռ այժմ, վերջացրեց նա իր խօսքը,—ես իմ օրհնութեան հետ կարող եմ տալ քեզ այդ փոքրիկ քսակը, որը գուցէ հարկաւոր կը լինի քեզ քո պանդխտութեան մէջ։

—Ինձ բաւական է ձեր օրհնութիւնը միայն, պատասխանեց պատանին, հրաժարվելով ընդունել քսակը։—իմ ծերունի հայրը հոգացել է բոլորը, ինչ որ պէտք է իմ ճանապարհորդութեան համար։

Վերջին խօսքերով նա ակնարկում էր ծերունի ներքինապետի վրա, որին իր հայր էր կոչում, որի երախտիքը իր կեանքի պահպանութեան համար երբէք մոռանալ կարող չէր։ Բայց տիկինը դարձեալ ստիպեց նրան ընդունել քսակը, որը չը մերժեց նա, համբուրելով իր բարերարի աջը։

Վրանի մէջ զբաղված լինելով, թէ տիկինը և թէ ներքինապետը չէին նկատել, որ դրսում եղանակը բոլորովին փոխվել էր։ Երկինքը պատած էր սև ամպերով և սաստիկ քամին, որ ալեկոծում էր անտառի ծառերը, սպառնում էր սոսկալի փոթորիկ։ Անտառը որոտում էր ծառերի միմեանց զարկվելուց, լեռները թնդում էին, իսկ կայծակը երբեմն փայլատակում էր գիշերային մթութեան մէջ։ Կարծես, աշխարհի վերջը հասել էր և տիեզերքը լցված էր ահռելի արհաւիրքով։ Անձրև դեռ չը կար, միայն երբեմն խոշոր կաթիլներ, քամու սաստիկ հոսանքի հետ թռչելով, գնտակի նման զարկվում էին մարդու երեսին։ Տիկինը, նկատելով եղանակի խստութիւնը, խորհուրդ տուեց ներքինապետին յետաձգել պատանու փախուստը։ Ծերունին համաձայնվեցաւ նրա հետ։

—Այս գիշեր ամենայարմար ժամանակն է, պատասխանեց պատանին մի առանձին վստահութեամբ,—ես սիրում եմ այսպիսի եղանակը։ Չեմ կարող մնալ, պիտի գնամ։

—Դու դեռ բաւական տկար ես, ասաց տիկինը կարեկցութեամբ,—փոթորիկի ժամանակ այդ լեռների վրա շատ ցուրտ է լինում, կարող ես մրսել, կարող ես կրկին հիւանդանալ։

—Կարող է ուրիշ վտանգներ ես պատահել, աւելացրեց ծերունին,—եթէ անձրևը սաստկանալու լինի, ձորերի մէջ հեղեղներ կը բարձրանան։

Պատանին հաստատ մնալով իր որոշման վրա, պնդեց, թէ ոչինչ չէ կարող արգելել նրա ուղևորութիւնը, թէ նա ցանկանում է մի րոպէ առաջ դուրս գալ, հեռանալ այն մթնոլորդից, որի օդը նրան խեղդում է, ուր ամեն ինչ նրա սրտում ցաւ և կսկիծ է յարուցանում։

Սիրին հասկացաւ պատանու սրտի վշտերը, հասկացաւ, թէ ինչն է դուրս քշում նրան այդ երկրից, վճռեց չը հակառակել նրա ցանկութեանը և ամեն ինչ թողնել Աստուծոյ կամքին։

—Զիները, մարդիկը որտեղ են, հարցրեց նա ներքինապետից։

—Անտառում պահված են, պատասխանեց ծերունին։

—Պատրաստվեցէք պատանուն ճանապարհ ղընել, Ահմէդ, ինչ որ Աստուած կամեցել է, այն կը լինի, ասաց տիկինը խորին հաւատքով,—գուցէ այդ փոթորիկը Աստուած յարուց հէնց նրա համար, որ պարսիկները քաշվեն իրանց վրաններում, ճանապարհների վրա ոչ ոք չը մընայ, որ պատանու փախուստը աննկատելի լինի։

Ծերունի ներքինապետը մտաւ վրանի գաղտնարանը, որ բաժանված էր վարագուրով, այնտեղից դուրս բերեց մի զոյգ ատրճանակ և մի թուր. վերջինը նա իր ձեռքով կապեց պատանու մէջքից, և գոտեորելով նորընծայ ասպետին իր նոր կոչման մէջ, ասաց.

—Ես բացի այդ թուրից ուրիշ թանգագին բան չունեմ քեզ ընծայելու համար, Դաւիթ,—դա Սիւնեաց աշխարհի մի հզօր թագաւորի թուրն է, որ ես դուրս եմ բերել խանի գանձարանից։ Այդ թուրը, որ մի ժամանակ հայ թագաւորի հզօր ձեռքում պաշտպանում էր մեր հայրենիքը, թող այսուհետև յիշեցնէ քեզ նրա ցաւալի անկումը, թող այսուհետև ոգեորէ քեզ նրա վերականգնման համար գործել։ Դու պէտք է բարձրացնես մեր հայրենիքի փառքը նրա կործանման փոշիներից և վերստին պէտք է կեանք և ազատութիւն պարգևես մեր թշուառ աշխարհին։ Ես այդ խօսքերը իմ գլխից չեմ խօսում, այլ Աստուած ինքը յայտնեց ինձ մի տեսիլքի մէջ։ Եւ ես հաւատում եմ քո ճակատագրին, դու էլ պիտի հաւատաս քո կոչմանը...

Լսելով այդ խօսքերը, պատանին կարծում էր թէ իր վրա ծիծաղում են, և ծերունին պատրաստ էր պատմել նրան իր տեսած երազի մանրամասնութիւնները, բայց տիկինը զգուշացրեց նրան, որ լռէ։

—Այդ հասակում տղայի հետ այդպիսի բաների վրա չեն խօսում, ասաց նա արարերէն լեզուով.—երբ ժամանակը կը գայ, նա ինքը կը հասկանայ բոլորը...

—Այժմ բարի ճանապարհ եմ մաղթում քեզ, ասաց տիկինը պատանու ճակատը համբուրելով,—կրկնում եմ, որտեղ որ լինես, ամեն մի պէտքի, ամեն մի վտանգի ժամանակ կարող ես վստահութեամբ դիմել ինձ, ես պատրաստ եմ ամեն մի հանգամանքում օգնել քեզ։

Պատանին խորին շնորհակալութեամբ համբուրեց տիկնոջ աջը և մի քանի կաթիլ արտասուք գլորվեցան նրա ձեռքի վրա։ Նա մնաք բարեաւ ասաց և իսկոյն դուրս եկաւ վրանից, գիշերային մթութեան մէջ ծածկելու իր դառն արտասուքը։ Ծերունի ներքինապետը հետևեց նրան։

Տիկինը մնաց վրանում միայնակ, տխուր և սաստիկ սրտաշարժ դրութեան մէջ։ Կարծես նրա հարազատ եղբայրը դէպի օտարութիւն էր գնում, կարծես, նրանից մի ամենասիրելի բան պակսում էր։ Նա լուռ յափշտակութեան մէջ ծունր դրեց վրանի յատակի վրա և նրա վշտերով լի աչքերը դարձան դէպի արդարադատ երկինքը։ Ինչ բանի համար էր աղօթում նա,—այդ միայն Աստուած դիտէ։ Բայց ջերմ արտասուքը առատութեամբ թրջում էր նրա գունաթափ դէմքը, և երկար նոյն դրութեան մէջ մընում էր նա, մինչև կայծակի վերջին փայլը լուսաւորեց վրանի մթին շրջակայքը, և հեռացող պատանու քայլերի ձայնը ծածկվեցաւ որոտման սաստիկ զըրդոցի տակ։

Փոթորիկը աւելի սոսկալի կերպարանք ստացաւ....

Առաջին գրքի վերջը